ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Ժաննա Անդրեասյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մարաքեշ (Մարոկկոյի Թագավորություն)

2022թ. հունիսի 14-ից 18-ը

4. Հրավիրող կողմը

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրեն Օդրի Ազուլե

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն մեծահասակների կրթությանը նվիրված միջազգային 7-րդ նախարարական համաժողովին (CONFINTEA VII)

6. Քննարկված թեմաները

Պանելային քննարկումներ

- մեծահասակների կրթություն և ուսուցում՝ կրթության համար նոր հանրային պահանջների շրջանակներում. դեպի շարունակական կրթության իրավունք,
- գրագիտությունը՝ որպես շարունակական կրթության ուսուցման հիմք,
- մեծահասակների կարողությունների զարգացումը ապագա աշխատանքի նպատակով,
- մեծահասկաների կրթությունն ու սուսուցումը թվային միջավայրերում,
- մեծահասակների կրթությունն ու ուսուցումը կլիմայական փոփոխություններից բխող գործողությունների համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Պանելային քննարկման ժամանակ անդրադարձ է կատարվել թվային դարաշրջանում մեծահասակների ուսումնառության (ուսուցման) և կրթության

ոլորտում առկա մարտահրավերներին և հնարավորություններին, խոսվել է COVID-19 համավարակի ընթացքում առաջացած դժվարությունների հաղթահարման նպատակով համայնքային ուսուցման կենտրոնների ստեղծման հայաստանյան փորձի մասին: Շեշտադրվել է միդիագրագիտության կարևորությունը և անհրաժեշտությունը ներառելու մասնագիտական զարգացման գործընթացում, ինչպես որ դա իրականացվում է, օրինակ, ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերի դեպքում: Ֆինանսական կրթության համատեքստում նշվել է 2021 թ. մեկնարկած նոր ծրագրերի մասին, որոնք ուղղված են կանանց և գյուղական բնակավայրերի բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը: Ելույթում նշվել է, որ մեծահասակների կրթությունը և ուսուցումը, ինչպես նաև համապատասխան օրենսդրական փոփոխությունների առաջարկներն ամփոփված են Հայաստանի Հանրապետության պետական ռազմավարական փաստաթղթերում, ինչը փաստում է Կառավարության՝ այս ուղղությամբ առաջընթաց գրանցելու վճռականությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Մեծահասակների կրթության յոթերորդ համաժողովի արդյունքում ընդունվել է կոմյունիկե՝ հաջորդ 12 տարիների գործողությունների շրջանակի վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

21.06.2022